

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-397-17.10.2018-ՊԻՄԻ-011/0 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՆՐԱՔԿԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-397¹-17.10.2018-ՊԻՄԻ-011/0 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-397²-17.10.2018-ՊԻՄԻ-011/0 ԵՎ «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-397³-17.10.2018-ՊԻՄԻ-011/0 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑԿԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Պատգամավոր Խոսրով Հարությունյան	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նաև՝ Նախագիծ) 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով. «2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով. «4.1. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կարող են ներկայացնել կառավարության իրենց կողմից առաջարկվող կառուցվածքը և կազմը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով՝ հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ստացված նյութերը տեղադրում է համացանցային կայքում ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ	Ընդունվել է, նածագիծը լրամշակվել է	Ընդունվել է

			աշխատանքային օրվա ավարտը, բայց ոչ շուտ, քան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը:»: Սույն կետի ուժի մեջ մտնելը անցումային դրույթներով նախատեսել 2021 թվականից:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	3-րդ կետը լրացնել «3-րդ» բառերով:	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդված	4-րդ կետով օրենսգրքի նոր խմբագրությամբ առաջարկվող 4-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Ընտրական շտաբների վրա տեղադրված ցուցանակները սույն օրենսգրքի իմաստով քարոզչական տպագիր նյութեր չեն համարվում, եթե դրանք չեն ներառում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կոչեր, դրանց թիվը չի գերազանցում ընտրության համար կազմավորված ընտրական տեղամասերի թիվը, և յուրաքանչյուր ցուցանակի մակերեսը չի գերազանցում 6 քառակուսի մետրը:»	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Հոդված 35. Օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասում «5 օր» բառերը փոխարինել «9 օր» բառերով:»:	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:

		կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
5.	ՀՀ կառավարություն	Ընտրական օրենսգրքի 75-րդ հոդված	Ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետից հանել ««, Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ նաև ըստ ընտրական տարածքների» բառերը	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Ընտրական օրենսգրքի 83-րդ հոդված	Նախագծի 45-րդ հոդվածով օրենքագրի նոր խմբագրությամբ առաջարկվող 83-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «համապետական» բառը:	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:
7.	«Ծառուկյան» խմբակցություն	Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախատեսել, որ ԱԺ-ում 4-րդ ուժը կարող է ընդգրկվել միայն այն դեպքում եթե հավաքել է կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անձշտությունների թվի գումարի առնվազն 2%-ը:	Ընդունվել է, Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	Ընտրական օրենսգրքի 97-րդ հոդված	Մեկ քաղաքական կուլիցիա ձևավորելու համար նախատեսել առավելագույնը 4 կուսակցության:	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 70-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 70-րդ հոդվածը հանել, քանի որ օրենսգրքի 100-րդ հոդվածը անհրաժեշտ է ,որ տարածվի նաև կուսակցությունների դաշինքի վրա:	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 71-րդ հոդված (Անցումային դրույթներ)	Նախագծի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ, ինչպես նաև լրացնել նոր՝ 5-րդ մասով.«3. Սույն օրենքի 17-19-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2019 թվականի փետրվարի 1-ին և տարածվում են ուժի մեջ մտնելուց հետո նշանակված ընտրությունների վրա:«5. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով	Նախագիծը լրամշակվել է	Ընդունվել է:

			նախատեսված էլեկտրոնային ձևը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանվում է այդ կետն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:»:		
--	--	--	---	--	--